



Australian Government
Department of Health

Շարունակեք հաճախել ձեր բժշկական ժամադրություններին

Կորոնավիրուսի ընթացքում կարևոր է, որ դուք շարունակեք կանոնավոր հաճախել ձեր բժշկական ժամադրություններին, հատկապես եթե ունեք քրոնիկ կամ առկա առողջական խնդիրներ:

Ձեր բժշկին դիմելը անվտանգ է: Երբ ներկայանաք ձեր ժամադրությանը, հետևեք ձեզ տրված հրահանգներին: Սա կարող է ներառել դիմակ կրելը (ձեր բժիշկը կարող է ձեզ այն տալ), ձեր ձեռքերը ախտահանելը, երբ ժամանում եք և մտնում առաձին տարածքի միջով:

Եթե դուք ունեք COVID19-ի ախտանիշներ, տեղեկացրեք ձեր բժշկին՝ ժամադրություն նշանակելիս: Նաև տեղեկացրեք նրանց ձեր վերջերս կատարած որևէ ուղևորության մասին կամ, եթե դուք շփման մեջ եք եղել որևէ մեկի հետ, ով ունի COVID-19: Կրեք դիմակ ժամադրության ժամանակ և մնացեք առնվազն 1.5 մետր հեռու այլ մարդկանցից ամբողջ ժամանակ: Հագացեք և փոշտացեք ձեր արմունկի մեջ:

Հեռաբժշկական ժամադրություններ

Հեռաբժշկական ժամադրությունները առողջապահական խորհրդատվություններ են, որոնք իրականացվում են հեռախոսի կամ տեսակոնֆերանսի միջոցով: Դրանք ձեզ թույլ են տալիս զանգահարել և զրուցել ձեր բժշկի հետ առանց տնից դուրս գալու: Դուք կարիք չունեք որևէ հատուկ սարքավորման, և կարող եք օգտագործել ձեր հեռախոսը կամ համակարգիչ: Դուք և ձեր բժիշկը կորոշեք, թե որն է լավագույն համակարգը՝ օգտագործելու ձեր կարիքների համար:

Բժիշկները, բուժքույրերը և հոգեկան առողջության մասնագետները կարող են անցկացնել հեռաբժշկական ժամադրություններ: Ցանկացած անձ, ով ունի Medicare քարտ, իրավունք ունի հեռաբժշկական ծառայություններ ստանալ: Ձեր բժիշկը կարող է նաև ձեզ դեղատոմս նշանակել հեռաբժշկական խորհրդատվության միջոցով:

Ձեր հեռաբժշկական ժամադրության ժամանակ ձեր բժիշկը հնարավոր է, որ ձեզ դեղատոմս նշանակի: Բժիշկները կարող են տրամադրել թղթային դեղատոմս կամ

կարող են ուղարկել դեղատոմսի թվային պատճենը ձեր նախընտրած դեղատուն ձեր հեռախոսակցական խորհրդատվությունից հետո:

Դեղորայքի տնային առաքում

Ձեր տեղորայքը կարող են առաքել ձեր տուն: Տնային առաքումը լավ տարբերակ է, եթե դուք մեկուսացված եք, առավել խոցելի եք լուրջ հիվանդությունների նկատմամբ կամ նախընտրում եք տանը մնալ:

Զանգահարեք ձեր նախընտրած դեղատուն կամ այցելեք նրանց կայքը, որպեսզի տեղեկանաք, արդյոք նրանք առաջարկում են տնային առաքում և արդյոք ունեն դեղորայքը վաճառքում: Հնարավոր է, որ դուք կարողանաք պատվիրել առցանց կամ հեռախոսով:

Եթե դուք ունեք թղթային դեղատոմս, դուք պետք է այն ուղարկեք փոստով կամ խնդրեք որևէ մեկին այն տանել դեղատուն՝ նախքան նրանք կարողանան դեղորայքը առաքել:

Եթե ձեր բժիշկը ուղարկել է դեղատոմսի թվային պատճենը, դեղատունը դեղորայքը կուղարկի դեղատոմսի վրա նշված հասցեով:

Աջակցություն հոգեկան առողջության համար

Կորոնավիրուսը փոխում է, թե ինչպես ենք ապրում և ժամանակ անցկացնում նրանց հետ, ում սիրում ենք:

Համավարակը մեզ հետ կլինի գալիք շատ ամիսներ, և կարևոր է, որ մենք հոգ տանենք մեր հոգեկան առողջության, ինչպես նաև մեր ֆիզիկական առողջության համար:

Կապի մեջ մնացեք ձեր ընկերների, ընտանիքի և համայնքի հետ հեռախոսով կամ համացանցով:

Եթե դուք ձեզ զգում եք լարված, տխուր, հոգնած, անհանգիստ կամ զայրացած, իմացեք, որ սա բնական է, և մի վախեցեք օգնության դիմել:

Լրացուցիչ տեղեկատվություն COVID-19-ի վերաբերյալ

Կարևոր է տեղեկացված մնալ պաշտոնական աղբյուրների միջոցով: Այցելեք [health.gov.au](https://www.health.gov.au), զանգահարեք կորոնավիրուսի թեժ գիծ 1800 020 080 հեռախոսահամարով կամ թարգմանչական ծառայություն՝ 131 450 հեռախոսահամարով: